ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 105-Ա
25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թ.

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐՓԻԿ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 44/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0.05168 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21)-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 20-ի թիվ 723-Ն, 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286, Կապան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 23-ի թիվ 9-Ն որոշումների և հաշվի առնելով համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության 10 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Համայնքի վարչական տարածքում, համայնքային սեփականություն հանդիսացող, համայնքի Կապան քաղաքի Արփիկ թաղամասի թիվ 44/3 հասցեում գտնվող, բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողերից 0.05168 հա հողամասը /ծածկագիր 09-001-0387-0046/ հասարակական կառուցապատման նպատակով (ավտոկայանատեղի կառուցելու) աճուրդով վաճառել՝ մեկնարկային գին սահմանելով 837220,0 /ութ հարյուր երեսունյոթ հազար երկու հարյուր քսան/ դրամ:

2. Համայնքի ղեկավարի պաշտոնակատարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ (10)՝

ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ — ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ — ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ — ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ

ԴԱՎԹՅԱՆ ՆԱՐԵԿ — ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱ

ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ — ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՝ ՆԱՐԵԿ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

2018 թ սեպտեմբերի 26

ք. Կապան